

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
<i>Հավելված 1</i>	
ՀԱՊԿ-ին և Մաքսային միությանը վերաբերող զեկույցներ	4
<i>Հավելված 2</i>	
Միջազգային գիտաժողովներ և սեմինարներ	4
<i>Հավելված 3</i>	
Հրատարակված գրքեր	4
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	5
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ	7
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ	9
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	11
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	12
ԳԻՏԱԿԱՆ-ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	14
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ	15
<i>Հավելված 4</i>	
Հրատարակված հոդվածներ	16
<i>Հավելված 5</i>	
Զեկույցներ գիտաժողովներում և սեմինարներում	20
<i>Հավելված 6</i>	
Հատուկ և զիտագործնական դասընթացներ	22
<i>Հավելված 7</i>	
Կազմակերպված սեմինարներ	24
<i>Հավելված 8</i>	
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	
2013թ. ՀՀ պետական բյուջեից ստացված սուբսիդիայի և կատարված ծախսերի	25
<i>Հավելված 9</i>	
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	
2013թ. ոչ պետական բյուջեից ստացված գումարների և կատարված ծախսերի	26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2013 թվականին «Նորավանք» ԳԿՀ-ի մասնակցությամբ պատրաստվել է ՀԱՊԿ-ին և Մաքսային միությանը վերաբերող 3 զեկույց (տե՛ս *Հավելված 1*), գործընկերների հետ համատեղ կազմակերպվել են 5 միջազգային գիտաժողով և սեմինար (տե՛ս *Հավելված 2*): Հրատարակվել են 4 գիրք (տե՛ս *Հավելված 3*) և 24 ամսագիր՝ 12 համար «21-րդ ԴԱԸ» և 12 համար «Գլոբուս» (ընդհանուր առմամբ «Նորավանքը» հրատարակել է 49 գիրք, 251 ամսագիր և հատուկ թողարկում), հրապարակվել է 76 հոդված (տե՛ս *Հավելված 4*):

Հիմնադրամի աշխատակիցները 26 զեկույցներով մասնակցել են 18 միջազգային և 6 հանրապետական գիտաժողովների (տե՛ս *Հավելված 5*): Կազմակերպվել և անցկացվել են հատուկ և գիտագործնական դասընթացներ (տե՛ս *Հավելված 6*): Հիմնադրամում կազմակերպվել է 7 սեմինար (տե՛ս *Հավելված 7*):

«Նորավանքի» կայքի (ունի 2000 մշտական բաժանորդ) ընթերցումների թիվը հաշվետու տարում կազմել է ավելի քան 1,5 մլն, իսկ *Google* համակարգով «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի» որոնումը 3 լեզուներով տալիս է շուրջ 50. 000 հիշատակում:

Հիմնադրամի 4 աշխատակից պարգևատրվել է կառավարական մեդալներով և հուշամեդալով:

Հիմնադրամի աշխատակիցները տվել են տասնյակ հարցազրույցներ հայրենական և օտարերկրյա լրատվամիջոցներին:

Հիմնադրամը համագործակցում է հետևյալ կազմակերպությունների և կառույցների հետ՝

- ՀՀ Սփյուռքի նախարարություն,
- ՀՀ Պաշտպանության նախարարություն,
- ՀՀ Ազգային ժողով,
- «ՀայԲնուսագարդ» ՓԲԸ,
- Аналитическая Ассоциация ОДКБ (Մոսկվա, ՌԴ),
- European Geopolitical Forum (Բրյուսել, Բելգիա),
- Центр стратегических оценок и прогнозов (Մոսկվա, ՌԴ),
- «Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ,
- «Տնտեսագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
- «Արևմտահայության համագումար» ՀԿ:

Հավելված 1

ՀԱՊԿ-ին և Մաքսային միությանը վերաբերող զեկույցներ

1. Публичный доклад Аналитической Ассоциации ОДКБ "Организация договора о коллективной безопасности и безопасность Евразии", Москва, 2013.
2. Социологическое исследование «Отношение армянского общества к евразийской и европейской интеграции», 5-11 октября, 2013г., Ереван.
3. Армения и Таможенный союз: оценка экономического эффекта интеграции, Санкт-Петербург, Доклад N 20, 2013.

Հավելված 2

Միջազգային գիտաժողովներ և սեմինարներ

1. Թուրքիայում հայերից բռնագրավված գույքին և մարդու իրավունքներին առնչվող խնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկում թուրքական մտավորականության ներկայացուցիչների հետ, ապրիլի 27-28, 2013:
2. ՀԱՊԿ-ը և Կովկասի անվտանգությունը, հունիսի 26, 2013, Երևան, «Նորավանք» ԳԿՀ (ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ն.Ն. Բորոյուժայի և ՀԱՊԿ Վերլուծական ասոցիացիայի համակարգող Ի.Ն. Պանարինի մասնակցությամբ):
3. ՀԱՊԿ-ը և Եվրասիայի անվտանգությունը, հոկտեմբերի 23-25, 2013, Երևան, ՀԱՊԿ Վերլուծական ասոցիացիայի հետ համատեղ:
4. ՀԱՊԿ-ը և անվտանգության ժամանակակից մարտահրավերները, նոյեմբերի 19, 2013, Երևան, ՀԱՊԿ Վերլուծական ասոցիացիայի, ՀԱՊԿ ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի և «Ռուս-հայկական համագործակցություն» ՀԿ-ի հետ համատեղ:
5. Անվտանգությունը և համագործակցությունը Հարավային Կովկասում, դեկտեմբերի 18-20, 2013, Երևան, «ՊոլիտԿոնտակտ» քաղաքական տեխնոլոգիաների կենտրոնի (Ռուսաստան) հետ համատեղ:

Հավելված 3

Հրատարակված գրքեր

1. Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում, հեղինակային խմբի ղեկավար՝ Գագիկ Հարությունյան, Երևան, 2013:
2. *Արա Մարջանյան*, Ադրբեջանի Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, Երևան, 2013:
3. *Հարությունյան Գ., Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:
4. *Հովհաննես Ջատիկյան*, Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2013:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնում ընդգրկված է 6 աշխատակից՝ Ա.Սիմավորյան (ղեկավար), Թ.Վարդանյան, Վ.Հովյան, Տ.Ղանալանյան, Ա.Բարսեղյան (փորձագետներ), Է.Լ.Դանիելյան (խորհրդական):

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները հրատարակել են 2 գիրք, 33 հոդված, մասնակցել 5 գիտաժողովի: Կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է երկու կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Թուրքիայում հայերից բռնագրավված գույքին, մարդու իրավունքներին առնչվող խնդիրներին և Հայաստան-Սփյուռք համագործակցության հեռանկարներին: Քննարկումներին մասնակցել են հայաստանյան, սփյուռքահայ և արտասահմանյան փորձագետներ: 2009-2013թթ. Հայագիտական կենտրոնը Քաղաքական և Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնների հետ համատեղ հրատարակել է 12 կոլեկտիվ և անհատական մենագրություն:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի կողմից աշխատանքներ են իրականացվել հետևյալ հետազոտական ուղղություններով.

- Ազգային ներուժի բացահայտման, համախմբման և արդյունավետ օգտագործման ուղիների մշակման ուղղությամբ հետազոտություններ
- Սփյուռքի հայ համայնքների վերաբերյալ հետազոտություններ՝ այնտեղ տիրող իրավիճակի գնահատման, նրանց խնդիրների վերհանման և դրանց լուծումներ առաջարկելու նպատակով
- «Վրաստանի՝ վրացացման ենթարկված հայությունը. ներուժ և ինքնություն» պլանով հաստատված թեմայի ուղղությամբ հետազոտություններ:

Վերոհիշյալ ուղղություններով հետազոտական աշխատանքներն իրականացվել են երկու ձևաչափով.

- ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրեր, որոնք վերջնարդյունքում հրատարակվել և հրատարակվելու են գրքերի տեսքով:
- «Նորավանք» ԳԿՀ ծրագրերի շրջանակներում իրականացվող հետազոտություններ, որոնք վերջնարդյունքում հոդվածների տեսքով տպագրվել են Հիմնադրամի և այլ հրատարակություններում:

ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրեր

ՀՀ Սփյուռքի նախարարության աջակցությամբ կենտրոնի կողմից իրականացվել է մեկ հետազոտական ծրագիր, ընթացքի մեջ է մյուսի իրականացումը.

1. *Սփյուռքի գիտական և վերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ:* Հետազոտությունը նվիրված է Սփյուռքի գիտավերլուծական ներուժի բացահայտմանն ու գնահատմանը: Վեր են հանվել արտերկրի ակադեմիական կառույցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող հայկական մտավոր ռեսուրսները: Ձևավորվել է գիտավերլուծական աշխատանքով զբաղվող սփյուռքահայ մասնագետների տվյալների շտեմարան:

Մշակվել են սփյուռքահայ և հայաստանյան գիտնականների, փորձագետների համագործակցության մեխանիզմներ: Հետազոտության արդյունքները հրատարակվել են գրքի տեսքով:

2. Հայագիտական կենտրոնները Մփյուռքում. ներուժի գնահատում: Ծրագրի նպատակն է բացահայտել Մփյուռքում գործող հայագիտական կենտրոնների ներուժը և նպաստել դրա արդյունավետ օգտագործմանը: Ծրագրի իրականացումը ենթադրում է հետևյալ հիմնական փուլերը.

- Մփյուռքում գործող հայագիտական կենտրոնների ցանկի ձևավորում
- Այդ կենտրոնների մասին տվյալների հավաքում, մշակում և տեղեկատվական շտեմարանի ձևավորում
- Հավաքված տվյալների վերլուծություն, որի հիման վրա գրքի բովանդակության կազմում:

Ներկայումս իրականացված է առաջին փուլը: Ընթացքի մեջ են երկրորդ և երրորդ փուլերի իրականացման աշխատանքները: Հետազոտությունը նախատեսվում է հրատարակել 2014թ.:

Կենտրոնի գործունեության արդյունքում ստացված տվյալները լրացուցիչ անգամ ակտուալացրել են հայ փորձագետների ցանցային ինստիտուտի ստեղծման նախագիծը:

***«Նորավանք» ԳԿՀ ծրագրերի շրջանակներում
իրականացված հետազոտություններ***

«Վրաստանի՝ վրացացման ենթարկված հայությունը. ներուժ և ինքնություն» պլանով հաստատված թեմայի վերաբերյալ աշխատանքներն իրականացվել են 2 փուլով՝

- Աղբյուրագիտական և պատմագիտական բազայի ուսումնասիրություն և դասակարգում:
- Դաշտային հետազոտություն, որն անցկացվել է Թբիլիսիում 2013թ. մայիսի 23-ից հունիսի 2-ը: Պատրաստվել է ամփոփ հաշվետվություն «Վրացացած կամ «շուռ տված» հայեր» խորագրով, որը տրամադրվել է Վրաստանում ՀՀ դեսպանատանը:

Նախատեսվող աշխատանքներ

2014թ. կենտրոնը շարունակելու է ազգային ներուժի բացահայտմանն ու համախմբմանը նպատակաուղղված հետազոտությունները: Այս շրջանակներում կարևոր տեղ ունի դեռևս այս տարի սկսված «Հայագիտական կենտրոնները Մփյուռքում. ներուժի գնահատում» նախագծի իրականացումը: Հետազոտական կարևոր ուղղություն է լինելու նաև Մփյուռքի աշխարհաքաղաքական կողմնորոշումների բացահայտումը, որը նախատեսվում է իրականացնել «Նորավանք» ԳԿՀ այլ կենտրոնների հետ համատեղ առանձին նախագծի միջոցով: Շարունակվելու են հետազոտությունները նաև Մփյուռքի համայնքների, Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության և այլ հրատապ խնդիրների ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնում ընդգրկված է 4 աշխատակից՝ Սևակ Մարուխանյան (կենտրոնի ղեկավար), Մերգեյ Մարգարյան (փոխղեկավար), Կարեն Վերանյան, Արա Մարջանյան (փորձագետներ):

2013 թվականին կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 1 գիրք և 18 հոդված, մասնակցել և ելույթներ են ունեցել 12 միջազգային գիտաժողովներում (*տե՛ս Հավելված 5*), հարցազրույցներ տվել առաջատար լրատվամիջոցներին: Կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է 4 միջազգային գիտաժողով:

Հաշվետու ժամանակահատվածում Քաղաքական հետազոտությունների կենտրոնն իրականացրել է հետազոտություններ՝ համաձայն 2013 թվականի համար հաստատված ծրագրերի: Վերջիններիս հիմնական ուղղություններն են.

- Ռազմաքաղաքական զարգացումները Հարավային Կովկասում
- Հարավային Կովկասում էներգետիկ և հաղորդակցային նախագծերի ուսումնասիրությունը
- Հայաստանն ինտեգրացիոն նախագծերում
- Հայաստանի միջազգային վարկանիշները:

Կենտրոնի հետազոտությունների հիմնական թիրախ է եղել ինտեգրացիոն գործընթացների ուսումնասիրությունը, որի շրջանակներում հրատարակվել են ուսումնասիրություններ ՀԱՊԿ և Եվրասիական միության, Հայաստան-Իրան երկաթգծի և այլ նախագծերի հեռանկարների վերաբերյալ:

«Նորավանք» ԳԿՀ-ն 2013թ. դարձել է ՀԱՊԿ Վերլուծական ասոցիացիայի լիիրավ անդամ, ինչի արդյունքում վերջինիս հետ համատեղ կազմակերպել է 3 ներկայացուցչական միջազգային գիտաժողով և պայմանավորվածություն ձեռք բերել հետագա համատեղ աշխատանքների վերաբերյալ:

Հրատարակվել է «Ադրբեջանի Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը» հետազոտությունը՝ նվիրված Ադրբեջանի տնտեսությանը և հետագա խնդիրներին:

«Նորավանք» ԳԿՀ աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել է ՀՀ Մաքսային միությանն անդամակցության տնտեսական հետևանքների վերաբերյալ հիմնարար հետազոտություն՝ «ՀՀ Մաքսային միությանն անդամակցության տնտեսական էֆեկտները» (հետազոտական խմբի ղեկավար՝ պրոֆեսոր *Սշոտ Թավադյան*), որն իրականացվել է Եվրասիական բանկի հետ համագործակցության արդյունքում: Զեկույցի հետևությունները ներկայացվել են տարբեր ատյաններում քննարկումների ժամանակ:

2013թ. դեկտեմբերի 18-19-ին «Նորավանք» ԳԿՀ-ն «ՊոլիտԿոնտակտ» քաղաքական տեխնոլոգիաների կենտրոնի հետ կազմակերպել և Երևանում անցկացրել է «Անվտանգությունն ու համագործակցությունը Հարավային Կովկասում» միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են առաջատար փորձագետներ Հայաստանից, Ռուսաստանից, Ադրբեջանից, Թուրքիայից, Իրանից, Լիբանանից, Ուկրաինայից, Վրաստանից, Բելառուսից և Վրաստանից: Այս միջոցառումը ՀՀ-ում

2013թ. անցկացված ամենաներկայացուցչական քաղաքագիտական համաժողովն էր, որն արժանացել է տեղի և արտերկրի լրատվամիջոցների մեծ ուշադրությանը:

Միջազգային գիտաժողովները, որոնց հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են կենտրոնի փորձագետները, տեղի են ունեցել Լոնդոնում, Թբիլիսիում, Բուխարեստում, Բրյուսելում, Բրատիսլավայում, Վարշավայում, Վաշինգտոնում, Մոսկվայում, Մյունխենում և Երևանում: Կոնֆերանսները նվիրված են եղել ԼՂՀ հիմնախնդրին, հարավկովկասյան հակամարտություններին, Հարավային Կովկասում, ինչպես նաև Եվրասիական միության հետ Հայաստանի համագործակցության հեռանկարներին:

Նախատեսվող աշխատանքներ

Կենտրոնը 2014թ. պլանավորում է շարունակել աշխատանքները՝ հիմնական շեշտը դնելով ՀՀ ինտեգրացիոն գործընթացների վրա: Մա պայմանավորված է նրանով, որ ՀՀ անդամակցությունը Մաքսային միությանը փորձագիտական աջակցության կարիք ունի, և Քաղաքական հետազոտությունների կենտրոնը նպատակ ունի աջակցել այս գործընթացին՝ ներկայացնելով մասնագիտական վերլուծություններ և գնահատականներ: Հետազոտությունների կենտրոնում է լինելու նաև տարածաշրջանում գիտական ոլորտի զարգացման հարցը, ինչպես նաև ռազմաքաղաքական զարգացումները Հարավային Կովկասում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնում ընդգրկված է 7 աշխատակից՝ Գազիկ Հարությունյան (կենտրոնի ղեկավար), Աննա Ժամակոչյան (կենտրոնի փոխղեկավար), Արփինե Մանուսյան, Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան, Սամվել Մարտիրոսյան, Սոնա Մանուսյան (փորձագետներ):

2013թ. ՏՀ կենտրոնի աշխատակիցները համագործակցող գործընկերների հետ համատեղ հեղինակել են 2 հանրային զեկույց («Организация договора о коллективной безопасности и безопасность Евразии»; «Отношение армянского общества к евразийской и европейской интеграции»), 1 գիրք («Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում») և 25 հոդված: Կենտրոնի աշխատակիցներն ընդհանուր առմամբ 2009-2013թթ. մասնակցել են տարբեր հետազոտական նախագծեր ամփոփող 9 գրքի հրատարակմանը:

Կենտրոնը նախաձեռնել է նաև 1 սեմինար-քննարկում («Արժեքները Հայաստանում. հետազոտական արդյունքներ», բանախոս՝ ԵՊՀ Անձի հոգեբանություն ամբիոնի վարիչ, դոցենտ Նարինե Խաչատրյան):

Կենտրոնի փորձագետները մասնակցել և 10 զեկույց են ներկայացրել միջազգային կամ տեղական գիտաժողովներում ու սեմինարներում, տվել են հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ:

Կենտրոնը «Նորավանք» ԳԿՀ Ուսումնական կենտրոնի հետ համատեղ իրականացրել է «Տեղեկատվական անվտանգություն» հատուկ մագիստրոսական դասընթացը՝ Գիտությունների ազգային ակադեմիայի Միջազգային գիտակրթական կենտրոնի Լրագրության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների համար: Ընդհանուր առմամբ ներկայացվել է 11 հիմնական թեմա 28 ակադեմիական ժամի ընթացքում (տե՛ս Հավելված 6): Դասախոսությունները կարդացել են կենտրոնի ղեկավարը, կենտրոնի 3 փորձագետ և 1 հրավիրյալ փորձագետ:

Կենտրոնը 2013թ. ավարտել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից մրցութային կարգով տրամադրված երկամյա դրամաշնորհի միջոցներով՝ «ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրություն» նախագծի աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են դաշտային հետազոտություններից (փորձագիտական հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, ՁԼՄ կողավորման գործընթաց) ստացված քանակական տվյալների, ինչպես նաև փորձագիտական հարցազրույցների համապարփակ վերլուծության և հաշվետվության պատրաստման աշխատանքները: Հետազոտությունն ամփոփվել է «Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում» գրքի տեսքով: Գրքում ներկայացվում է ավանդական և ինտերնետային որոշ լրատվամիջոցների կողմից իդեոլոգեմների (գաղափարական-արժեքային իմաստավորումներով հասկացությունների) տարածման ուսումնասիրությունը: Վերլուծության են ենթարկվել հետազոտված զանգվածային լրատվամիջոցների բովանդակության մեջ առկա իդեոլոգեմների համամասնությունները, դրանց որակական բնութագրիչները, իմաստավորման համատեքստերը և հուզական երանգավորման կշիռները: Դիտարկվել են նաև ՀՀ տեղեկատվական տարածքի առանձնահատկությունները՝ լրատվական դաշտի զարգացման անցած ուղին, ՁԼՄ բովանդակային առանձնահատկությունները, բովանդակության ձևավորման գործոնները, ինչպես նաև ՁԼՄ լսարանի առանձնահատկությունները Հայաստանում:

Կենտրոնն իր նախորդ հետազոտական փորձի և մեթոդական գործիքաշարերի հիման վրա մշակել է էքսպրես մեթոդաբանություն և իրականացրել կոնկրետ իդեոլոգեմների շուրջ առցանց լրատվամիջոցների վերլուծություններ: 2013թ. սեպտեմբերի 16-20-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է առցանց 4 լրատվական կայքերի (1in.am, Azatutyun.am, ilur.am, panarmenian.net) մոնիթորինգ: Կենտրոնի փորձագետների կողմից վերլուծության են ենթարկվել Հայաստանի ՄՄ անդամակցության որոշմանն առնչվող տեքստերը՝ գերակա արժեքների և իդեոլոգեմների շրջանառման տեսանկյունից, ինչպես նաև քաղաքական ինտեգրացիոն գործընթացի շուրջ հասարակության, քաղաքացիական հասարակության մասնակցության հարցն առցանց ՁԼՄ-ում: Մաքսային միության հետ անմիջական կապ ունեցող իդեոլոգեմների՝ ՁԼՄ-ում իմաստավորման շարունակականության և նոր գաղափարների ուսումնասիրման նպատակով դիտարկվել են «Ռուսաստանի» մեդիա կերպարը, «հանրության» ներկայացվածությունը, «արժեքային կողմնորոշումները» Եվրոպա - Ռուսաստան երկրնստրանքի մեդիա դիսկուրսում: Վերլուծության արդյունքները կներկայացվեն հոդվածի տեսքով:

Նախատեսվող ծրագրեր

Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնը մշակել է և 2014թ. հունվարից Հայագիտական և Քաղաքական ուսումնասիրությունների կենտրոնների հետ համատեղ կիրականացնի «Մփյուռքի աշխարհաքաղաքական կողմնորոշումները» հետազոտական նախագիծը:

Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնը 2014թ. նախատեսում է շարունակել տեղեկատվական հոսքերի և դրանցում կարևոր գաղափարական կոնստրուկտների շուրջ ծավալվող դիսկուրսի ուսումնասիրությունը: Դրանք կիրականացվեն կոնկրետ մշակված ծրագրերի միջոցով և «Նորավանք» ԳԿՀ մյուս կենտրոնների փորձագետների հետ համագործակցությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Տիգրան Հարությունյան:

2013թ. փետրվար-հունիս ամիսներին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ անցկացվել են գիտապրակտիկ դասընթացներ մագիստրատուրայի ուսանողների համար, կազմակերպվել է «Տեղեկատվական անվտանգություն» խորագրով հատուկ դասընթաց:

Դասախոսություններով հանդես են եկել «Նորավանք» ԳԿՀ և Հայաստանի առաջատար մասնագետներ:

Կենտրոնի ղեկավարի կողմից հեղինակվել է 1 հոդված:

Նախատեսվող աշխատանքներ

2014թ. նախատեսվում է կազմակերպել դասընթացներ (նաև հեռավար), քննարկումներ: 2014թ. «Նորավանք» ԳԿՀ այլ կենտրոնների հետ համատեղ նախատեսվում է իրականացնել Հարավային Կովկասի երկրների գիտական պոտենցիալի, գիտության բարեփոխումների և գիտական համակարգերի արդյունավետության համապարփակ հետազոտություն:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հրատարակչական կենտրոնում ընդգրկված է 7 աշխատակից՝ Լուսինե Բաղրամյան (կենտրոնի ղեկավար), Գրիգորի Սարգսյան, Խոնարհիկ Քարաուղլանյան, Լիլիթ Մելիքսեթյան, Ռուզաննա Մանուկյան, Տաթևիկ Քարաուղլանյան, Անահիտ Հարությունյան, Ժանետա Գալստյան (գրադարանավար):

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է հետևյալ ամսագրերի և գրքերի հրատարակությունը.

Ամսագրեր

- 21-րդ ԴԱԸ (6 համար)
- 21-й век (4 համար)
- 21st Century (2 համար)
- Գլոբուս (12 համար)

Գրքեր

- Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում, հեղինակային խմբի ղեկավար՝ Գագիկ Հարությունյան, Երևան, 2013:
- *Արա Մարջանյան*, Ադրբեջանի Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, Երևան, 2013:
- *Հարությունյան Գ., Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:
- *Հովհաննես Ջատիկյան*, Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2013:

Հրատարակություններն առաքվել են 100-ից ավելի կազմակերպությունների և անհատների, ինչպես նաև բաշխվել Հիմնադրամի սեմինարների մասնակիցներին:

Ընդհանուր առմամբ «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից հրատարակվել է

- 251 ամսագիր և հատուկ թողարկում
- 59 գիրք

Հիմնադրամի կայքն ունի մոտ **2000** մշտական բաժանորդ, որոնք ստանում են առաքվող նյութերը 3 լեզվով: Կայքում տեղադրվել է մոտ 600 նյութ, որոնք առաքվել են բոլոր բաժանորդներին:

**Կայքի այցելուների թիվը 2013թ. ընթացքում,
ըստ ադմինիստրատորի տվյալների**

	Visits (այցելու)	Pageviews (էջերի թերթում)
Total (Ընդհանուր)	264.000	1.563.000

Կայքի այցելությունների աշխարհագրությունը 2013թ. ընթացքում

Երկիր		Pageviews	Ծավալ
Հայաստան	am	398,473	105.30 ԴԵ
Ադրբեջան	az	391,651	5.11 ԴԵ
Ռուսաստան	ru	345,991	36.61 ԴԵ
ԱՄՆ	us	137,275	11.79 ԴԵ
Չինաստան	cn	50,594	3.60 ԴԵ
Ուկրաինա	ua	42,738	9.00 ԴԵ
Գերմանիա	de	16,873	2.50 ԴԵ
Ֆրանսիա	fr	14,546	2.08 ԴԵ
Վրաստան	ge	12,759	2.53 ԴԵ
Թուրքիա	tr	8,649	1.14 ԴԵ

Միացում կայքին

	Pageviews	Տոկոս
www.noravank.am	566,025	75.6 %
Որոնողական համակարգերից	114,074	15.2 %
Այլ կայքերից	66.341	8.8 %
http://analitika.at.ua		
http://www.yerkramas.org		
https://www.facebook.com		

ԳԻՏԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Նորավանք» ԳԿՀ գիտական-փորձագիտական խորհուրդը բաղկացած է նախագահից (Գ.Հարությունյան), նախագահի տեղակալից (Ս.Սարուխանյան), քարտուղարից (Վ.Հովյան) և 26 անդամներից: Խորհրդի գործառույթներն են «Նորավանք» ԳԿՀ գիտական գործունեության կազմակերպումը, կենտրոնների աշխատանքների համակարգումը, արտաքին համագործակցության կազմակերպումը և այլն: Սյդ նպատակով խորհուրդն անցկացնում է նիստեր, սեմինարներ և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի գիտական-փորձագիտական խորհուրդն անցկացրել է 7 նիստ: Կազմակերպվել են 9 սեմինար ու կլոր սեղան:

Գիտական-փորձագիտական խորհուրդը քննարկել և որոշումներ է ընդունել Հիմնադրամի կենտրոնների հաշվետվությունների, աշխատանքային ծրագրերի, գիտական գործունեությանն առնչվող հեռանկարային և ընթացիկ խնդիրների վերաբերյալ:

Եռամսյա, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների քննարկման ժամանակ, մասնավորապես, ամփոփվել է «Նորավանք» ԳԿՀ կենտրոնների, ինչպես նաև անհատ փորձագետների կատարած աշխատանքը, ուղենշվել են հետագա գործունեության ընթացքն ու ուղղությունները:

Կազմակերպված սեմինարներին, որոնք նվիրված էին Հայաստանի, տարածաշրջանային և միջազգային անվտանգության հրատապ խնդիրներին, մասնակցել են առաջատար փորձագետներ Հայաստանից և արտասահմանից, պետական պաշտոնյաներ, ՀՀ-ում օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցներ:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2013թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գործունեության ապահովման ծրագրի գծով կատարված աշխատանքները.

1. 2013թ. հունվարին «Նորավանք» ԳԿՀ-ի հայտարարած մրցույթի հաղթող ճանաչված «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ն 2013թ. հունվարի 23-ից մինչև փետրվարի 11-ը աուդիտ է իրականացրել և տվել «Նորավանք» ԳԿՀ-ի 2012թ. գործունեության և ֆինանսական հաշվետվության համար աուդիտորական եզրակացություն, որը «Նորավանք» ԳԿՀ-ի 07.03.2013թ. N 39 գրությամբ ներկայացվել է «Նորավանք» ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդին: Իսկ ՀՀ արդարադատության նախարարի 24.12.2009թ. N 319-ն հրամանի համաձայն՝ «Նորավանք» ԳԿՀ-ն 18.03.2013թ. հաշվետվություն է ներկայացրել ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրին: Աուդիտորական նշված եզրակացությունը հրատարակվել է «Գոլոս Արմենիի» օրաթերթի 14.03.2013թ. N25 (20378) համարում և տեղադրվել 18.03.2013թ. www.noravank.am ու www.azdarar.am կայքերում:

2. Ըստ 2013թ. ՀՀ պետական բյուջեի՝ 18.01.2013թ. Նորավանք» ԳԿՀ-ն **102 227,0** հազ. դրամ սուբսիդիայի պայմանագիր է կնքել ՀՀ կառավարության աշխատակազմի հետ: 2013թ. ընթացքում գազի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման կապակցությամբ Նորավանք» ԳԿՀ-ին լրացուցիչ տրվել է **276,0** հազ. դրամ: ՀՀ կառավարության 23.10.2013թ. N 1210-Ա որոշման հիման վրա ՀՀ կառավարության աշխատակազմի հետ կազմվել է «Նորավանք» ԳԿՀ-ին 2480,0 հազ. դրամ նվիրաբերության պայմանագիր ՀԱՊԿ ներկայացուցիչների մասնակցությամբ գիտաժողով անցկացնելու համար (*տե՛ս Հավելված 8*):

3. «Նորավանք» ԳԿՀ-ի՝ 2013թ. ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների հաշվին գնումների պլանը 10.01.2013թ. N 3 գրությամբ ներկայացվել է ՀՀ Ֆինանսների նախարարության, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ 2013թ. նախատեսված տպագրական աշխատանքների համար «Նորավանք» ԳԿՀ-ն 15.01.2013թ. հայտարարել է շրջանակային մրցույթ, որի հաղթող է ճանաչվել «Գասպրինտ» ՍՊԸ-ն:

4. 2013թ. «Նորավանք» ԳԿՀ-ն համագործակցել է ՀՀ Սփյուռքի նախարարության հետ դրամաշնորհային ծրագրերի մասով, իսկ ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի հետ՝ գիտական աստիճան ունեցող աշխատողներին ՀՀ կառավարության 2008թ. հունվարի 10-ի թիվ 2-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ վճարների մասով (*տե՛ս Հավելված 9*):

5. Կազմվել և 29.01.2013թ. ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել նաև «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2014-2016թթ. բյուջետային միջնաժամկետ ծախսային ծրագիրը և 2014թ. բյուջեի հայտը՝ կատարելով հետագա ճշտումներ:

6. 2013թ. «Նորավանք» ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամադու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական համալիրի 25,3 հա հողամասից 5 հա վարձակալության է հանձնվել Արենի համայնքի բնակիչ Արթուր Առաքելյանին մեկ տարի ժամկետով, 100 000 (հարյուր հազար) դրամ վարձավճարով՝ նպատակ ունենալով ապահովել որոշակի եկամուտներ, որոնք կուղղվեն այդ համալիրի պահպանման ծախսերին:

Հրատարակված հոդվածներ (76)

1. *Գազիկ Հարությունյան*, «Ինտեգրման գործընթացները և տեղեկատվական քաղաքականությունը», «Գլոբուս» վերլուծական հանդես, #2 (35), Երևան, 2013:
2. *Գազիկ Հարությունյան*, Ինտեգրացիայի որոշ հիմնախնդիրների մասին՝ արժեքային համակարգի համատեքստում, «Գլոբուս» վերլուծական հանդես, #4 (37), Երևան, 2013:
3. *Գազիկ Հարությունյան*, «Տեղեկատվական գործունը և տարածաշրջանային անվտանգությունը», «Գլոբուս» վերլուծական հանդես, #8 (41), Երևան, 2013:
4. *Գազիկ Հարությունյան*, Եվրասիայի անվտանգությունը. գաղափարախոսություն և աշխարհաքաղաքականություն, «Գլոբուս» վերլուծական հանդես, #11 (44), Երևան, 2013:
5. *Գազիկ Հարությունյան*, Հայաստանին ուղղված մարտահրավերները գլոբալացվող աշխարհում, «21-րդ ԴԱԸ», #1 (47), Երևան, 2013:
6. *Գազիկ Հարությունյան*, «ԵԱՄ. Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները և ինտեգրման հնարավոր սցենարները», «21-րդ ԴԱԸ», #3 (49), Երևան, 2013:
7. *Գազիկ Հարությունյան*, «Բազմաբևեռ իրողությունները, Մերձավոր Արևելքը և Ցեղասպանությունը՝ «վազող տողի» ռեժիմով», «21-րդ ԴԱԸ», #4 (50), Երևան, 2013:
8. *Գազիկ Հարությունյան*, «Հայագիտությունը որպես «կրիտիկական ենթակառուցվածք»», «21-րդ ԴԱԸ», #6 (52), Երևան, 2013:
9. *Գագիկ Արությունյան*, «Вызовы Армении в глобализирующемся мире», «21-й ВЕК», №1 (26), Ереван, 2013г.
10. *Գագիկ Արությունյան*, ЕАС: Проблемы информационной безопасности и возможные сценарии интеграции, «21-й ВЕК», №3 (28), Ереван, 2013г.
11. *Գագիկ Արությունյան*, «ОДКБ и некоторые проблемы информационной безопасности», «21-й ВЕК», №4(29), Ереван, 2013г.
12. *Gagik Harutyunyan*, Challenges to Armenia in the globalizing world, «21st CENTURY», № 2 (14), 2013.
13. *Gagik Harutyunyan*, Multipolar realities, Middle East and News Ticker genocide, «21st CENTURY», № 1 (13), 2013.
14. *Սևակ Սարուխանյան*, «Ղազվին-Ռեշտ-Աստարա՞, թե՞ Իրան-Հայաստան», Գլոբուս, թիվ 2 (35), 2013թ.:
15. *Սևակ Սարուխանյան*, «Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղին և նրա տարածաշրջանային հեռանկարները», Գլոբուս, թիվ 4 (37), 2013թ.:
16. *Սևակ Սարուխանյան*, «Իրանը նախագահական ընտրություններից հետո», Գլոբուս, թիվ 6 (39), 2013թ.:
17. *Սևակ Սարուխանյան*, «ՀԱՊԿ-ը և հաղորդակցային անվտանգությունը», Գլոբուս, թիվ 8 (41), 2013թ.:
18. *Սևակ Սարուխանյան*, «Հայկական էներգետիկայի հեռանկարներն ինտեգրացիոն նախագծերի համատեքստում», «21-րդ ԴԱԸ», թիվ 4 (50), 2013թ.:
19. *Սերգեյ Սարգսյան*, «Ռուսաստան-Թուրքիա. անուղղակի ռազմաքաղաքական դիմակայության ուժեղացում», Գլոբուս, թիվ 2 (35), 2013թ.:

20. *Սերգեյ Սարգսյան*, «Հետխորհրդային պետությունների ինտեգրացիոն հեռանկարները Ղրղզստանի և Ուկրաինայի օրինակով (ակնկալիքներ և մտավախություններ)», Գլոբուս, թիվ 5 (38), 2013թ.:
21. *Սերգեյ Սարգսյան*, «Թուրքիա. աշխարհիկ կարգի հոգեվարք», Գլոբուս, թիվ 7 (40), 2013թ.:
22. *Սերգեյ Սարգսյան*, «Հայաստանի ինտեգրացիոն մտադրությունները և ՀՀ և ԼՂՀ ռազմաքաղաքական անվտանգության որոշ հարցեր», Գլոբուս, թիվ 8 (41), 2013թ.:
23. *Սերգեյ Սարգսյան*, «Ռազմաքաղաքական համագործակցությունը Եվրասիական ինտեգրման համատեքստում», «21-րդ ԴԱԸ», թիվ 2 (48), 2013թ.:
24. *Սերգեյ Սարգսյան*, «Ռազմաքաղաքական համագործակցությունը Եվրասիական ինտեգրման համատեքստում», «21-й ВЕК», №3, 2013:
25. *Կարեն Վերանյան*, «ՀՀ-ն գործարարության վարկանիշով ԱՊՀ տարածքի առաջատարն է», Գլոբուս, թիվ 1 (34), 2013թ.:
26. *Կարեն Վերանյան*, «Տնտեսական ազատության ինդեքսը» 2012-2013թթ., Գլոբուս, թիվ 2 (35), 2013թ.:
27. *Կարեն Վերանյան*, «ՀՀ ԱՎԾ Տարեգիրք 2011-2012թթ.», Գլոբուս, թիվ 4 (37), 2013թ.:
28. *Կարեն Վերանյան*, «Հարավային Կովկասի երկրների գիտության վիճակագրությունը», Գլոբուս, թիվ 6 (39), 2013թ.:
29. *Կարեն Վերանյան*, «ՀՀ-ն՝ Հարավային Կովկասի ամենակայացած պետություն. «Ձախողված երկրների ինդեքսը» 2013թ. զեկույցը», Գլոբուս, թիվ 9 (42), 2013թ.:
30. *Կարեն Վերանյան*, «Հայաստանը՝ Հարավային Կովկասի ամենախաղաղասեր երկիր. «Խաղաղասեր երկրներ» 2011-2013թթ. վարկանիշային զեկույցները», Գլոբուս, թիվ 11 (44), 2013թ.:
31. *Տիգրան Հարությունյան*, «Գիտության զարգացման հեռանկարները Հայաստանում և 2012-2013թթ. աշխարհի լավագույն համալսարաններն ըստ *Times Higher Education* ամսագրի», Գլոբուս, թիվ 8 (41), 2013թ.:
32. *Ս.Սիմավորյան, Վ.Հովյան*, Սփյուռքի գիտական և փորձագիտական ներուժը. հաշվառման և կազմակերպական հարցեր, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 2, 2013:
33. *Ս.Սիմավորյան*, Ստամբուլի հայ կաթողիկե համայնքի դպրոցները, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 5, 2013:
34. *Ս.Սիմավորյան*, Թուրքիան 2015-ին ընդառաջ, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 6, 2013:
35. *Ս.Սիմավորյան, Վ.Հովյան*, Սփյուռքի հայագիտական կենտրոնները՝ որպես ինստիտուցիոնալ մտավոր ռեսուրս, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 9, 2013:
36. *Ս.Սիմավորյան*, Սփյուռքի վերլուծական հանրույթը որպես պետության ներուժ. միջազգային փորձը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 12, 2013:
37. *Ս.Սիմավորյան*, Կանխատեսումներ Թուրքիայի ապագայի շուրջ, «Հայկական հարց», արվյանագիտական, հայագիտական հասարակական-քաղաքական հանդես, № 2 (3), 2013:
38. *Ս.Սիմավորյան*, Թուրքիայի հնարավոր գործողություններ 2015-ին ընդառաջ, «Հայկական հարց», արվյանագիտական, հայագիտական հասարակական-քաղաքական հանդես, № 3 (4), 2013:
39. *Ս.Սիմավորյան*, Թուրքիան 2015-ին ընդառաջ, «ԱԶԴԱԿ», 21.08.2013:
40. *А.Симворян*, Будни и праздники армянской католической общины Стамбула, «Ноев Ковчег», № 12 (218), Июль (1-15) 2013.

41. *А.Симаворян, В.Овян*, Религиозная толерантность в современном обществе, «21-й ВЕК», №1, 2013.
42. *Վ.Հովյան*, Եկեղեցական գույքի վերադարձման խնդիրը Թուրքիայում, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2013, թիվ 1:
43. *Վ.Հովյան*, Սիրիայի հայ համայնքի քաղաքական դիրքորոշումների շուրջ, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2013, թիվ 4:
44. *Վ.Հովյան*, Հայկական սփյուռքի փոխակերպումը. մարտահրավերներ և հնարավորություններ, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2013, թիվ 5:
45. *Վ.Հովյան*, Լիբանանի հայ համայնքը արդի մարտահրավերներին ընդառաջ, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2013թ., թիվ 7:
46. *Վ.Հովյան*, Հայկական գիտավերլուծական հանրությունը Ռուսաստանում, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2013թ., թիվ 12:
47. *Վ.Հովյան*, Եկեղեցական գույքի վերադարձման խնդիրը Թուրքիայում, «Հայկական հարց» աբովյանագիտական, հայագիտական հասարակական-քաղաքական հանդես, № 2 (3), 2013:
48. *Վ.Հովյան*, Լիբանանի հայ համայնքը արդի մարտահրավերներին ընդառաջ, «Հայկական հարց» աբովյանագիտական, հայագիտական հասարակական-քաղաքական հանդես, № 3 (4), 2013:
49. *Վ.Հովյան*, Գրախոսական, Հովհաննես Զատիկյան, Կարինի նահանգը 19-րդ դարի երկրորդ կեսին, Երևան, 2013թ., Ազգ. 10 դեկտեմբեր, 2013թ., թիվ 215 (5298):
50. *Է.Լ. Դանիելյան*, Գարեգին Նժդեհի խոհերը Հայոց անկախ պետության վերականգնման մասին, Գլոբուս, 2013, թիվ 5:
51. *Է.Լ. Դանիելյան*, Հայաստանի և այլ երկրների պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունների քննադատությունը, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Զեկուցումների դրույթներ, Երևան, 2013, էջ 13-14:
52. *Է.Լ. Դանիելյան*, Գանձասարի կաթողիկոսությունը XVIIIդ. ազգային-ազատագրական պայքարում, Զեկուցում՝ կարդացված «Արցախի ազգային-ազատագրական պայքարը. Գյուլիստանից մինչև մեր օրերը» միջազգային գիտաժողովում, Ստեփանակերտ, ԼՂՀ, 3-6.10.2013, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12394
53. *Է.Լ. Դանիելյան*, Գարեգին Նժդեհի իմաստասիրությունը http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12355
54. *Է.Լ. Դանիելյան*, Ազատության հոգևոր և բնափիլիսոփայական ընկալումը Գարեգին Նժդեհի խորհրդածություններում http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7135
55. *Է.Լ. Դանիելյան*, Գրախոսական՝ Nikolay Hovhannisyan. King of Kings Tigran the Great and the Armenian Empire as Evaluated by Modern Arab Historiography, Yerevan, 2012, 83 p. Լրաբեր հասարակական գիտությունների, 2013, N 1, pp. 350-353.
56. *Ջ.Լ. Դանիելյան*, Армения: цивилизационный вектор в истории развития Шелкового пути, 21-й ВЕК, 2013, N 3.
57. *E.L. Danielyan*, Importance of the Armenian Toponyms' Ontological Integrity in the System of National Security – 21st CENTURY, 2013, N 2, pp. 78-101.
58. *E.L. Danielyan*, Turkish-Azerbaijani falsifications of the Armenian toponyms as an indication of the genocidal policy. - Բանբեր հայագիտության, 2013, N 1, էջ 161-181:
59. *Տ.Ղանալանյան*, Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս», 2013, թիվ 2:

60. *Տ. Ղանալանյան*, Հումանիտար ոլորտի գիտավերլուծական հանրությունը սփյուռքահայ համայնքներում. պատկերի ուրվագիծ, «Գլոբուս», 2013, թիվ 11:
61. *Տ. Ղանալանյան*, 1946-1948թթ. հայրենադարձության արդյունքներն ու հետևանքները, «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», հ. 4, Երևան, 2013:
62. *Թ. Վարդանյան*, «Ադրբեջանցիներ. ինքնության փնտրտուքը հետխորհրդային շրջանում», «21-րդ ԴԱԸ» ամսագիր, Երևան, N 3, 2013:
63. *Т. Варданын*, «Национальная политика и национальная идентичность в Закавказье. 1920-1930-ые гг.»// “История сталинизма”: материалы международной научной конференции, 9-13 октября 2013 г., Москва, изд-во “Росспэн”.
64. *Т.Варданын*, “Коллективная память и репрезентация истории в контексте трансформирующихся потребностей социума” (На основе материалов репрезентации истории армяно-татарских столкновений 1905-1906 гг. в контексте потребностей современного армянского и азербайджанского социумов), Европейский университет в Санкт-Петербурге, сайт <http://old.eu.spb.ru/reset/files/vardanyan.pdf>, (РФ).
65. *Սամվել Մարտիրոսյան*, «Ադրբեջանական սոցիալական մեղիաները», «Գլոբուս» վերլուծական հանդես, #1 (34), Երևան, 2013:
66. *Սամվել Մարտիրոսյան*, «Տվյալների պաշտպանության խնդիրները Հայաստանում», «Գլոբուս» վերլուծական հանդես, #3(36), Երևան, 2013:
67. *Սամվել Մարտիրոսյան*, «Համացանցի ներթափանցումը Հարավային Կովկաս», «Գլոբուս» վերլուծական հանդես, #9 (42), Երևան, 2013:
68. *Սամվել Մարտիրոսյան*, «Մտուղենի բացահայտումները. աշխարհն ամերիկյան և բրիտանական գաղտնալսման տակ», «Գլոբուս» վերլուծական հանդես, #11 (44), Երևան, 2013:
69. *Սամվել Մարտիրոսյան*, «Հայաստանյան համացանցը 2011-2013թթ. ընթացքում. հիմնական զարգացումները», «21-րդ ԴԱԸ», #5 (51), Երևան, 2013:
70. *Սոնա Մանուսյան, Դիանա Գալստյան*, «Հեռուստատեսիալները՝ որպես բովանդակություն և ծավալ», «Գլոբուս» վերլուծական հանդես, #1 (34), Երևան, 2013:
71. *Աննա Ժամակոչյան, Լիլիթ Հակոբյան*, «Հայաստանի արժեքային կողմնորոշումները միջմշակութային ուսումնասիրությունների համատեքստում», «Գլոբուս» վերլուծական հանդես, #7 (40), Երևան, 2013:
72. *Արփիինե Մանուսյան*, «ԶԼՄ լսարանի վստահությունը.միտումներ», Գլոբուս» վերլուծական հանդես, #7 (40), Երևան, 2013:
73. *Դիանա Գալստյան, Սոնա Մանուսյան, Աննա Ժամակոչյան*, «Հեռուստատեսության բովանդակությունը. ծրագրային ուղղվածությունները և բովանդակության ձևավորման գործոնները», «21-րդ ԴԱԸ», #3 (49), Երևան, 2013:
74. *Աննա Ժամակոչյան, Արփիինե Մանուսյան*, «ԶԼՄ լսարանի առանձնահատկությունները Հայաստանում», «21-րդ ԴԱԸ», #3 (49), Երևան, 2013:
75. *Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան*, «Տպագիր և առցանց մամուլի առանձնահատկությունները Հայաստանում», «21-րդ ԴԱԸ», #5 (51), Երևան, 2013:
76. *Լիլիթ Հակոբյան*, Ներմշակութային սահմանների արժեքային բաղադրիչը (երևանցիների և երևանաբնակ արցախցիների օրինակով), «21-րդ ԴԱԸ», #5 (51), Երևան, 2013:

Ջեկույցներ գիտաժողովներում և սեմինարներում (26)

1. *Гагик Арутюнян*, Евразийский союз: проблемы информационной безопасности и перспективы интеграции, доклад на конференции «Евразийская интеграция: перспективы и проблемы», 26 января, 2013թ., Ереван:
2. *Гагик Арутюнян*, О некоторых аспектах интеграции в контексте системы ценностей, доклад на конференции «Армения: геополитические и интеграционные перспективы», 13 апреля, 2013թ., Ереван:
3. *Գաղիկ Հարությունյան*, Տեղեկատվական գործոնը և տարածաշրջանային անվտանգությունը, զեկույց «Տարածաշրջանային անվտանգություն» կլոր սեղանի ժամանակ, հունիսի 26, 2013, Երևան:
4. *Գաղիկ Հարությունյան*, «Հայագիտությունը որպես կրիտիկական ենթակառուցվածք», «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» Հայագիտական երկրորդ համաժողով, 17-19 հոկտեմբեր, 2013, Երևան:
5. *Гагик Арутюнян*, Безопасность Евразии. Идеология, доклад на конференции «ОДКБ и безопасность Евразии», октябрь 23-25, 2003, Ереван:
6. *Гагик Арутюнян*, Безопасность Евразии: геополитика и идеология доклад на конференции «ОДКБ и современные вызовы безопасности» Ноябрь 19, 2013, Ереван:
7. *Гагик Арутюнян*, Трансформация региона, доклад на конференции «Безопасность и сотрудничество на Южном Кавказе» декабрь 18-20, 2013, Ереван:
8. *Севак Саруханян*, Энергетическая безопасность Армении и региональная интеграция, доклад на конференции «Безопасность и сотрудничество на Южном Кавказе» декабрь 18-20, 2013, Ереван
9. *Sevak Sarukhanyan*, Armenia and Iran: the problems and perspectives of cooperation. presentation at “Iran and the Caucasus conference”, November 30, 2013, Washington:
10. *Sevak Sarukhanyan*, The Economic Aspects of the NKR conflict, presentation at “The Perspectives of the NK conflict solution” conference, April 30, London:
11. *Сергей Саркисян*, «Образ врага и перспективы разрешения Нагорно-Карабахского конфликта», конференция «Преодолевая тупик», Тбилиси, январь 2013г.
12. *Сергей Саркисян*, «Современные тенденции в международном терроризме», конференция «Угрозы в современном динамичном мире», Бухарест, апрель 2013г.
13. *Сергей Саркисян*, «Проблемы регионального развития Южного Кавказа», конференция «Военно-гражданские отношения: опыт государств Западной и Восточной Европы», Братислава, апрель 2013г.
14. *Сергей Саркисян*, «Европейская интеграция и Южный Кавказ», конференция «Интеграционные проекты ЕС», Варшава, апрель 2013г.
15. *Сергей Саркисян*, «Некоторые аспекты военно-гражданских отношений», конференция «Безопасность государств Южного Кавказа в свете опыта V4», Тбилиси, Май 2013г.
16. *Сергей Саркисян*, «Новые проявления международного терроризма в регионе Большого Ближнего Востока», конференция «Терроризм в динамике современного мира», Мюнхен, сентябрь 2013г.

17. *Сергей Саркисян*, «Развитие военно-гражданских отношений в условиях продолжающегося конфликта», «1-й Форум по Безопасности Южного Кавказа», Тбилиси, декабрь 2013г.
18. *Մերգեյ Մարգարյան*, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը Հայաստանի ռազմաքաղաքական և տնտեսական ինտեգրման համատեքստում, զեկույց «Անվտանգությունը և համագործակցությունը Հարավային Կովկասում» միջազգային գիտաժողովում, դեկտեմբերի 18-20, 2013, Երևան:
19. *Թ. Վարդանյան*, «1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների լուսաբանումը հայ և ադրբեջանական պատմագրության մեջ», միջազգային գիտաժողով «Պատմության ուսումնասիրման մեթոդաբանությունը 20-րդ դարում», փետրվարի 1-7, 2013, Կիև, Ուկրաինա:
20. *Թ. Վարդանյան*, «Ազգային քաղաքականությունն ու ազգային ինքնությունն Անդրկովկասում 1920-1930-ական թթ», միջազգային գիտաժողով՝ «Ստալինիզմի պատմություն», հոկտեմբեր 9-13, 2013, Կիև, Ուկրաինա:
21. *Թ. Վարդանյան*, «Ադրբեջանական ինքնության կառուցակցման ուղին», նոյեմբեր 2-19, 2013, Կալիֆոռնիայի համալսարան-Բերքլի, ԱՄՆ:
22. *Է.Լ. Դանիելյան*, Հայաստանի և այլ երկրների պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունների քննադատությունը, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, Երևան, 2013, էջ 13-14:
23. *Է.Լ. Դանիելյան*, Գանձասարի կաթողիկոսությունը XVIIIդ. ազգային-ազատագրական պայքարում, Ջեկուցում՝ կարդացված «Արցախի ազգային-ազատագրական պայքարը. Գյուլիստանից մինչև մեր օրերը» միջազգային գիտաժողովում, Ստեփանակերտ, ԼՂՀ, 3-6.10.2013:
24. *Սոնա Մանուսյան*, *Նարինե Խաչատրյան*, Արժեքները Հայաստանում. հետազոտական արդյունքներ, սեմինար, մարտի 28, 2013, Երևան, «Նորավանք» ԳԿՀ:
25. *Աննա Ժամակոչյան*, Իդեոլոգեմները հայաստանյան մեդիա դիսկուրսում, զեկույց «Հանրային հաղորդակցություն. արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները. Հայաստան 2013», գիտաժողովում, նոյեմբերի 26, 2013:
26. *Մանվել Մարտիրոսյան*, Использование социальных медиа в кризисные моменты, զեկույց «Հանրային հաղորդակցություն. արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները. Հայաստան 2013» գիտաժողովում, նոյեմբերի 26, 2013:

Հատուկ և գիտագործնական դասընթացներ

**«Տեղեկատվական անվտանգություն» հատուկ դասընթաց
(11 թեմա, ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի
լրագրության բաժնի I կուրսի ուսանողների համար)**

1. *Գազիկ Հարությունյան*, Տեղեկատվական անվտանգության հիմնադրույթները և ժամանակակից հայեցակարգային մոտեցումները, 19 փետրվարի, 2013:
2. *Գազիկ Հարությունյան*, Գաղափարախոսություն և տեղեկատվական անվտանգություն. արդի Հայաստանի տեղեկատվական անվտանգության ապահովման ռեսուրսները և հիմնախնդիրները, 19 փետրվարի, 2013:
3. *Գազիկ Հարությունյան*, Ինֆորմացիոն հասարակություն և ցանցային հանրություններ, 26 փետրվարի, 2013:
4. *Սամվել Մարտիրոսյան*, Տեղեկատվական միջոց-տեխնոլոգիաները և տեղեկատվական անվտանգությունը, 26 փետրվարի, 2013:
5. *Աննա Շամակոչյան*, Նոր և ավանդական մեդիաները տեղեկատվական անվտանգության համատեքստում, 5 մարտի, 2013:
6. *Շաննա Անդրեասյան*, Սոցիալական ցանցերի վերլուծությունն իբրև ժամանակակից իրականության ուսումնասիրության մեթոդաբանություն, 12 մարտի, 2013:
7. *Շաննա Անդրեասյան*, Սոցիալական ցանցերը Հայաստանում. դեպքերի ուսումնասիրություն, առանձնահատկությունների քննարկում, 12 մարտի, 2013:
8. *Սոնա Մանուսյան*, Մշակութային անվտանգություն, 19 մարտի, 2013:
9. *Սոնա Մանուսյան*, Մշակութային անվտանգության հարցերը գլոբալ տեղեկատվական հոսքերում, 26 մարտի, 2013:
10. *Աննա Շամակոչյան*, Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականության համակարգը, 2 ապրիլի, 2013:
11. *Սամվել Մարտիրոսյան*, Հակահայկական ինֆոքաղաքականության դեմ Հայաստանի պաշտպանությունը, 9 ապրիլի, 2013:

**ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ
անցկացվող պրակտիկ դասընթացների**

ԾՐԱԳԻՐ

(փետրվար 10-25)

1. *Սևակ Մարուխանյան*, «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար - «Հայ-իրանական հարաբերությունները», փետրվարի 15, 2013:
2. *Սերգեյ Մարգսյան*, «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փոխղեկավար - «Ռազմաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասում», փետրվարի 18, 2013:

3. *Աննա Ժամակոչյան*, «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փոխդեկավար - «Տեղեկատվական անվտանգության հիմնադրույթները», փետրվարի 19, 2013:
4. *Արեստակես Միմավորյան*, «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի դեկավար - «Թուրքիայի ուղեղային կենտրոնները», փետրվարի 20, 2013:
5. *Վահրամ Հովյան*, «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ - «Հայաստանի քաղաքական համակարգի գաղափարախոսական դաշտը», փետրվարի 21, 2013:
6. *Թամարա Վարդյանյան*, «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ - «Վրաստան և Ադրբեջան. ինքնության խնդիրներ», փետրվարի 22, 2013:
7. Ամփոփում – Փետրվարի 25, 2013:

Կազմակերպված սեմինարներ (7)

1. «Նորավանք» ԳԿՀ զարգացման ուղենիշերի շուրջ» սեմինար, զեկուցող՝ «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գագիկ Հարությունյան, փետրվարի 12, 2013:
2. «Արժեքները Հայաստանում. հետազոտության արդյունքներ», սեմինար-քննարկում, զեկուցողներ՝ ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, դոցենտ, հ.գ.թ. Նարինե Խաչատրյան և «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Սոնա Մանուսյան, մարտի 28, 2013:
3. Միջազգային և տարածաշրջանային հարցերին նվիրված կլոր սեղան Լեհաստանի ԱԳ նախարարի տեղակալ Կատարժինա Պելչինսկա-Նալեչի, Լեհաստանի ԱԳՆ դեպարտամենտի տնօրենի տեղակալ Մարեկ Ցալկայի, Հայաստանում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկու և դեսպանության առաջին քարտուղար Մաչեյ Ֆալկովսկու հետ, ապրիլի 8, 2013:
4. Հայաստան-ԵՄ հարաբերություններին նվիրված քննարկում Միջազգային հարաբերությունների և եվրոպագիտության դոկտոր Յանոս Խարալամբիդիսի հետ, ապրիլի 25, 2013:
5. Հայաստան-Միյուռք համագործակցության հեռանկարներին նվիրված կլոր սեղան արևելագետ Տիգրան Եկավյանի (Փարիզ) հետ, մայիսի 17, 2013:
6. «Հայաստանի ինտեգրացիոն հեռանկարները», կլոր սեղան, հունիսի 17, 2013:
7. «Միջազգային և տարածաշրջանային անվտանգության խնդիրները», սեմինար-խորհրդակցություն, բանախոս՝ ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյան, նոյեմբերի 26, 2013:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013թ. ՀՀ պետական բյուջեից ստացված սուբսիդիայի և կատարված ծախսերի

	դրամ
ՀՀ 2013թ պետական բյուջեից՝ սուբսիդիա	102 503 000,00
- Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ	82 507 000,00
- Մասնագիտական ծառայությունների (գիտական-ստեղծագործական) գծով ծախսեր	990 000,00
- Հրատարակչական և տպագրման ծախսեր	10 000 000,00
- Ուսումնական և կրթական նախագծերի իրականացման	650 000,00
- Սեմինարների գծով ծախսեր	400 000,00
- Տնտեսական և գրասենյակային ծախսեր	600 000,00
- Կոմունալ ծախսեր	2046000,00
- Ավտոմեքենայի պահպանման ծախսեր	1 490 000,00
- Կապի պահպանման ծախսեր	2 480 000,00
- Առդիտի գծով ծախսեր	960 000,00
- Շենքի և ավտոմեքենայի գույքահարկի գծով ծախսեր	380 000,00
Ընդամենը ծախսեր	102 503 000,00

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013թ. ոչ պետական բյուջեից ստացված գումարների և կատարված ծախսերի

Բաժանորդագրությունից ստացված միջոցներ	1 197 000.0
Գրքերի վաճառքից ստացված միջոցներ	74 000.0
Գիտական-վերլուծական պայմանագրային աշխատանքներից ստացված միջոցներ	15 150 000.0
Բանկի տոկոսներ	94 000.0
ՀՀ Սփյուռքի նախարարություն (դրամաշնորհ)	3 600 000.0
Ընդամենը եկամուտ`	20 115 000.0
- Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ	5 173 000.0
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	3 700 000.0
- Մասնագիտական ծառայությունների (գիտական-ստեղծագործական) գծով ծախսեր	1 546 000.0
- Հրատարակչական և տպագրման ծախսեր	2 200 000.0
- Տնտեսական և գրասենյակային ծախսեր	235 000.0
- Կոմունալ ծախսեր	985 000.0
- Գրքերի ձեռքբերման, թերթերի և ամսագրերի բաժան. գծով ծախսեր	1 265 000.0
- Սարքավորումներ (համակարգչային տեխնիկա)	700 000 .0
- Գործուղման ծախսեր	1 055 000.0
- Այլ ծախսեր	336 000.0
Ընդամենը ծախս`	17 195 000.0
